ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ ԴՈՒԴՈՒԿԸ

ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանում դուդուկը ամենասիրված գործիքներից մեկն է։ Առանց դուդուկի գրեթե չի նշվում ոչ մի տոն կամ ծիսակատարություն։ Դուդուկով հնարավոր է նվագել տարբեր տրամադրությունների երաժշտություն՝ ուրախ երգեր, պարեղանակներ, լալիք, մուղամաձև իմպրովիզացիաներ և այլն։ Այս բոլորի ընթացքում դուդուկը կարող է հանդես գալ և՛ որպես սոլո-գործիք՝ երկրորդ դուդուկի նվագակցությամբ, և՛ որպես նվագախմբային գործիք։ Վերջերս դուդուկը սկսեց օգտագործվել սիմֆոնիկ նվագախմբի կազմի մեջ. օրինակ՝ Ա. Ռ. Տերտերյանի 3-րդ սիմֆոնիայում դուդուկին հատկացված է դրամատիզմով լի սոլոյի լայն պարտիա։ Հայ կոմպոզիտորները դուդուկի համար գրել են նաև պրոֆեսիոնալ երաժշտություն, ինչպիսին է, օրինակ՝ Յու. Դեվորգյանի «Կոնցերտ դուդուկի համար նվագախմբի հետ» ստեղծագործությունը։ Սա ապացուցում է, որ դուդուկն ունի մինչ այժմ մեզ համար անհայտ հատկություններ։ Այսուհանդերձ, չնայած արտահայտչական լայն հնարավորություններին, դուդուկը գտնվում է իր զարգացման նախնական աստիճանի վրա։ Դուդուկի ձայնային որակի մասին խոսելիս ամենից առաջ հարկավոր է ուշադրություն դարձնել նրա հատուկ տեմբրի վրա։ Վերջինս դուդուկի դասին պատկանող գործիքների տեմբրերից տարբերվում է խլացությամբ և դղրդոցով, որը նրան հաղորդում է տարբեր երանգներ։ Դուդուկի մյուս կարևոր հատկությունը նրա ոչ հավասար տեմպերացիան է։ Այս հատկությունը, սովորաբար, ունեն այն գործիքները, որոնք զրկված են փականային մեխանիզմից։ Դրանց թվում են՝ սիմֆոնիկ փողային գործիքներից տրոմբոնները (բացի վենտիլայինից) և մի շարք ժողովրդական գործիքներ։ Սակայն համեմատելով սիմֆոնիկ և ժողովրդական գործիքների ոչ տեմպերացվածությունը, հարկ է նշել, որ առաջինների մոտ դա խիստ սահմանափակված է՝ նվագախմբում նվագելու ժամանակ ձայնի հնչողության խախտումից խուսափելու պատճառով, իսկ վերջինների մոտ այն սահմանափակված է աննշան ձևով, որովհետև տեմպերացիայի հատկությունը ժողովրդական մեղեդու գլխավոր հատկություններից մեկն է։ Ժողովրդական փողային գործիքների ոչ տեմպերացված լարվածքը պայմանավորված է նրանով, որ նվագելու սարքի փականների դերը կատարում են նվագողի մատները։ Նվագանցքերի փակելու աստիճանից կախված, բացի սուղ դրույթներից, կարելի է վերցնել նաև կիսա և տարբեր մանրադրույթներ՝ դրանով ստեղծելով միկրոխրոմատիկ աստիճաններով ձայնաշար, որի շնորհիվ առաջանում է ձայնից ձայն հատուկ սահումով անցնելու հնարավորություն։ Ժողովրդական գործիքների ոչ հավասար տեմպերացիան չպետք է շփոթել կեղծ (շեղ) նվագ հասկացության հետ։ Խոսքն այստեղ դրանց տեմպերացիայի հատկության մասին է։

Դուդուկը նվագելիս ոչ նվազ կարևոր դեր է կատարում նաև հատուկ ձայնափոփոխականությունը, որը հաղորդում է հնչողության գեղեցկություն։ Տվյալ դեպքում պետք է հասկանալ տեմբրի պարբերական ձայնի ուժեղացման փոփոխություն՝ առանց իր բարձրացումը փոխելու, հատուկ թոքայտային շնչառության ձև, որի ժամանակ գործիքի հնչողությունը մոտենում է անդադարին։

Դուդուկի այս բոլոր առանձնահատկությունները կարող են ի հայտ գալ միայն նվագողի կատարյալ պատրաստության ժամանակ։ Գործիքի կատարելագործման հարցերը սերտորեն կապված են ոչ միայն այս պարագայի, այլև

նրա կոնստրուկտիվ հատկությունների և պատրաստման որակի հետ։ Ավելի պարզ պատկերացնելու համար, թե ինչպիսի նպատակ է հետապնդում դուդուկի կատարելագործումը, հարկավոր է ծանոթանալ գործիքի կոնստրուկտիվ հատկություններին, նրա պատրաստման նյութերի տարբեր որակների և տեմբրային հատկությունների հետ։ Դուդուկի կոնստրուկտիվ հատկություններից նշենք ռեզոնատորի խողովակի պատերի հաստությունն ու նվագանցքերի գայլիկոնման տարբեր ձևերը։ Ինչպես հայտնի է, ժողովրդական փողային գործիքները պատրաստվում են փայտի տարբեր տեսակներից, որը, իր հերթին, ազդում է գործիքի տեմբրային հատկությունների վրա։ Վերջերս փայտի փոխարեն սկսել են օգտագործել էբոնիտ և այլ պոլիմերներ, որոնք գցում են գործիքի որակը։ Փայտը, ըստ իր հատկությունների, ձայնը մասամբ խլացնում կամ անդրադարձնում է։ Դրա համար էլ փայտափողային գործիքների տեմբրը հիմնականում փափուկ է, մեղմ, իսկ օբերտոնների քանակը քիչ. ուստի փայտափողային գործիքների ձայնանցքերը պետք է գայլիկոնել մեծ քանակությամբ։ Սարքված լինելով միայն աշքաչափով, դուդուկը ունի հետևյալ լուրջ թերությունները. ա) չափազանց սահմանափակված ձայնաշար, բ) լարվածության հարաբերական խախտում, գ) նվագային մեխանիզմի բացակայություն, դ) վերոհիշյալի պատճառով՝ նվագելու բարդություն։

Վերջերս դուդուկները պատրաստվում են հաստ պատերով նյութերից։ Սա խախտում է դրանց բնական տեմբրը, որին բնորոշ է գեղեցիկ դզզոցը։ Օպտիմալ հաստության ընտրությունը լավագույն ձայնային որակներ ստանալու ամենագլխավոր պայմաններից մեկն է։ Դուդուկի լարվածության մասին խոսելիս առանձին «վարպետներ» (որոնք պատրաստում են գործիքը) գտնում են, թե իբր դուդուկի լարվածության խախտումը նրա հատկություններից մեկն է։ Գործիքի ձայնային հատկությունների վրա ազդում է նաև նվագանցքերի գայլիկոնման ձևը։ Փորձառու կատարողների հետ մեր զրույցներից պարզվեց, որ անցքիր պատրաստելու լավագույն ձևն այն է, երբ դրանք գայլիկոնվում են թեք, օդի հոսանքի ուղղությանը հակառակ։ Դա բացատրվում է նրանով, որ օդը, ղարկվելով անցքի սուր եզրերին, բաժանվում է 2 մասի, որոնցից մեկը ելնում է գործիքից դուրս, իսկ մյուսը, անցքի եզրերից հարթ անցնելու շնորհիվ, սահեցնում է հարկավոր ձայնալիքը։ Որոշ դուդուկների վրա գայլիկոնված են ուղղահայաց անցքեր, որի պատճառով առաջանում է ուժեղ ճակատային դիմադրություն, և ձայնը շեղվում է։ Կան նաև դուդուկների վատագույն տեսակներ, որոնց անցքերը գայլիկոնված են թեք, օդի հոսքի ուղղությամբ։ Այստեղ օդը, անդրադարձվելով թեք եզրերից, մեծ մասամբ դուրս չի գալիս և, խառնվելով օդասյան աշխատող մասի հետ, խախտում է գործիքի լարվածքը։

Ելնելով վերը շարադրվածից, մեր կարծիքով, անհրաժեշտ է դուդուկը կատարելագործել հետևյալ պատճառներով. այն պատրաստվում է առանց հաշվումների, աշքաչափով, որը բացասական է ազդում նրա ընդհանուր հատկությունների վրա։ Դուդուկն ունի սակավաթիվ տարբերակներ («Ռե» և «Լյա» դուդուկները, որոնք համապատասխանում են սոպրանոյի և ալտի տեսիտուրաներին), դրա համար էլ գործիքի ընդհանուր ձայնածավալը շատ քիչ է (ունդեցիմայից մինչև տերցդեցիմա)։ Ո՞րն է գործիքի կատարելագործման էությունը։ Պրոֆեսիոնալ դուդուկը, ինչպես և յուրաքանչյուր սիմֆոնիկ գործիք, պետք է պատրաստվի ըստ հաշվումների, նկատի ունենալով նրա ակուստիկ հատկությունների պահպանումը։ Այդ առիթով մենք հետազոտել ենք դուդուկի 10-ից ավելի օրինակ և դուրս բերել գործիքի երկարության ֆորմուլան, որն ընդունելի է, ինչպես պարզվեց, դուդուկի միայն «Մի» տարբերակի համար։ Մյուս տարբերակների համար այդ ֆորմուլան ընդունելի է միայն պրոպորցիոնալ հաշվարկներով՝ նկատի չունենալով փայտի հատկությունները։ Մեր այսօրվա խնդիրն է՝ ընդհանրացնել այդ ֆորմուլան բոլոր տարբերակների համար։ Հետագայում հարկ է ստեղծել դուդուկի տենորային և բարիտոնային տարատեսակներ, որի շնորհիվ կարելի է լայնացնել գործիքի ընդհանուր ձայնածավալը (մինչև 3 օկտավա) և վերցնել երաժշտական ավելի լայն ծրագիր։

Այդ դեպքում տվյալ տարբերակում կզգացվի տեմբրի թեթևակի կոպտացում (դատելով մեր լսած փորձնական օրինակներից)։

Դուդուկի տարբերակներ ստեղծելու փորձեր կատարվել են դեռևս 20-ական թվականներին՝ գործիքների հայտնի վարպետ, թառահար և կոմպոզիտոր՝ Վ. Բունու կողմից։ Նա ստեղծել էր դուդուկի սոպրանոի, ալտի, տենորի և կոնտրաբասի տարբերակներ։ Վերջինս կոչվում էր բունիֆոն։ Արդի ժամանակներում այդ գործով զբաղվում են առանձին անձինք։ Ռադիոյի և հեռուստատեսության Ա. Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլի դուդուկի աենորային և բարիտոնի տարբերակները զուտ կառուցվածքային թերությունների պատճառով լայն տարածում չստացան։ Համապատասխան փոփոխություններից հետո միայն այդ դուդուկները հնարավոր կլինի գործածել։

Այժմ գործիքի լարման ճշտության մասին, որովհետև դա նրա որակի ամենակարևոր կողմն է։ Այս տեսակետից դուդուկի թերությունը նրա ռեզոնատորի անանջատությունն է և մունդշտուկի միացման մասի հասարակացրած պատրաստումը։ Գործիքի անանջատությունը լավ է միայն նրանով, որ ձայնալիքները նորմալ են տարածվում, որը ստեղծում է լավ տեմբրի պայմաններ, սակայն նրա լարելը դժվարացված է. այն կատարվում է միայն մունդշտուկի կոպիտ շարժումով։ Այս բարդությունները կվերանան, եթե ռեզոնատորն անջատ ձևով պատրաստվի, որի դեպքում էլ կարող է խախտվել ձայնալիքների հավասարաչափ տարածումը՝ անջատվող մասերի միացման տեղերում առաջացող ճեղքերի պատճառով։ Ավելի լավ կլինի, եթե այդ անջատումը կատարվի դուդուկի մունդշտուկի միացման կողքին, ինչպիսին կլառնետի տակառիկն է։ Այդ դեպքում դուդուկը հնարավոր կլինի լարել առանց զգուշավորության՝ իր տեմբրին ու լարվածքին համապատասխան։ Այս առիթով մեզ հայտնի է, որ Ուրցաձոր գյուղում (Արարատի շրջան) վարպետ Ռ. Մանուկյանը ստեղծել է նման գործիք, որի նվագածունկը ընդհանուր է ֆլեյտայի ու զուռնայի համար, նայած թե որ գործիքի մասերն են միացվելու դրա հետ։

Մենք հակված չենք կարծելու, որ մեր առաջարկությունները վերջնական են, բայց դրանք, հավանաբար, կօգնեն ժողովրդական սիրված գործիք դուդուկի ավելի կատարյալ դառնալուն։

АРМЯНСКИЙ НАРОДНЫЙ ИНСТРУМЕНТ ДУДУК

САРКИС ОГАНЕСЯН

Резюме

Дудук в Армении является, пожалуй, наиболее любимым из народных инструментов. Он популярен во всех слоях населения. В последнее время этот инструмент стали использовать как в народных ансамблях, так и в симфоническом оркестре (3-я симфония А. Тертеряна), а также сочинять для дудука произведения на уровне профессиональной музыки (концерт для дудука с оркестром Ю. Геворкяна). Тем самым было доказано, что дудук имеет доселе неизвестные нам возможности. Несмотря на все это, главными недостатками дудука являются примитивность его изготовления и первобытный уровень его развития, в связи с чем предлагаются пути его модернизации.